



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4
«17» __12__ 2024թ.

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ՝
ՈՒԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Հ. ԶԱՔՈՅԱՆ
« 17 » __12__ 2024թ.



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝

084101.00.6 Անասնաբուծություն

Կրթական ծրագիր՝

084101.01.6 Անասնաբուծական
սանիտարական փորձաքննություն

Որակավորում՝

Անասնաբուծության բակալավր

Երևան 2024

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N₀ 4

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹՅՈՒ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԽԱԳԻՐ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՒ Գ. Գ. Մ. Ը. ԶԱԲՈՅԱՆ

17. 12. 2024р.

Ներդրվում է 2025-2026 ուս. տարվանից

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

(Բակալավրային կրթության, առկա ուսուցում)

Մասնագիտությունը՝ 084101.00.6 Անասնաբուժություն

Կրթական ծրագիրը՝ 084101.01.6 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն

Որակավորման անվանումը՝ Անասնաբուժության բակալավր

Ուսուցման նորմատիվային ժամկետը՝ 4 տարի

Կրեդիտների թիվը՝ 240

1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱՑԻԿ

[illegible]

42

☐ Արտադր.
պրակտ.

Արձակուրդ


 Դիպլոմալին
աշխատանք

Բովանդակություն		
1.	Ծրագրի ընդհանուր բնութագիրը	
2.	Ծրագրի նպատակը	
3.	Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները	
4.	Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները	
5.	Շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաները	
6.	Ծրագրի կառուցվածքը	
7.	Դասավանդման և ուսումնառության մեթոդները	
8.	Գնահատման մեթոդները	
9.	Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկան	
10.	Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները	
11.	ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ	
12.	ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ	
	Հավելվածներ	
	Հավելված 1. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլան	
	Հավելված 2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից	
	Հավելված 3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ)	

1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը	
Ֆակուլտետ	Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության
Ամբիոն	Անասնաբուժական սանիտարական փորձաքննության, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի
Ոլորտ/Միջոլորտային բնագավառ	081 Գյուղատնտեսական գիտություններ
Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը	084101.00.6 Անասնաբուծություն
Մասնագիտության կրթական ծրագիր	084101.01.6 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
ՄԿԾ պատասխանատու/ներ	ԱՍՓ, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի ամբիոնի վարիչ, ան.գ.թ., դոցենտ Սիրանուշ Ալթունյան
Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար)	Առկա, հեռակա
Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)	Անասնաբուծության բակալավր
Ուսուցման լեզուն	Հայերեն
Ծրագրի մուտքի ընդհանուր պահանջներ	Դիմորդի կրթական մակարդակը՝ միջնակարգ ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն
Ուսուցման ընդհանուր տևողություն/ կրեդիտ	4 տարի, 240 կրեդիտ
Որից՝	3184 ժամ
Լսարանային ուսուցում (ա.թ.՝ տեսական, գործնական, լաբորատոր)	
Ինքնուրույն աշխատանք	2880 ժամ
Քննաշրջան	21 շաբաթ
Պրակտիկա	16 շաբաթ
Ամփոփիչ ատեստավորում դիպլոմային աշխատանք	4 շաբաթ
Արձակուրդ	46 շաբաթ

1. Ծրագրի նպատակը
Մասնագիտության կրթական ծրագրի նպատակն է պատրաստել մասնագետներ, որոնք կունենան անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ անասնաբուժական սանիտարական փորձաքննության և սննդամթերքի անվտանգության ոլորտում, կարող են փորձաքննության ենթարկել կենդանական և բուսական ծագման հումքն ու մթերքը և տալ համապատասխան գնահատական, կանխել սննդամթերքի միջոցով հիվանդությունների տարածումն ու մարդկանց վարակումը՝ ազգային-տեղային, տարածաշրջանային և միջազգային պահանջներին համապատասխան: Ծրագրի իրականացման ընթացքում մեծ ուշադրություն կդարձվի պատրաստվող մասնագետների մոտ շարունակական կրթության և ինքնակատարելագործման ունակությունների զարգացման վրա: Բացի վերոնշյալից, կրթական ծրագրի նպատակներից է նաև աջակցել ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրագործմանը՝ պատրաստելով մասնագետներ, որոնք կնպաստեն պարենի անվտանգությանն ու ապահովմանն ուղղված նախաձեռնությունների իրականացմանը:
2. Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները
Տվյալ մասնագիտության և կրթական ծրագրի մրցակցային առավելությունն այն է, որ յուրահատուկ է և չի կրկնում ՀՀ-ում առկա այլ կրթական ծրագրերը: Այն միավորում է բոլոր անհրաժեշտ կրթական մոդուլներն ու վերջնարդյունքները, ինչն անհրաժեշտ է անասնաբուժական սանիտարական փորձագետներ պատրաստելու համար: Սովորողները ստանում են համապարփակ և ժամանակակից գիտելիքներ, հմտություններ կենդանական և բուսական ծագման հումքի և մթերքի փորձաքննության վերաբերյալ, ինչի արդյունքում կարող են դատել վերջիններիս պիտանելիության ու որակի մասին և իրականացնել համապատասխան գործողություններ: Սա այն եզակի մասնագիտությունն է, որը նպաստում է զոոնոզ հիվանդությունների կանխարգելմանը և պաշտպանում մարդկանց սննդային տարբեր վտանգներից առաջացող թունավորումներից ու վարակներից:
3. Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաներ (ԸԿ)
Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա. ԸԿ 1. Օգտագործել ստացված փիլիսոփայական գիտելիքները, վերլուծել պատմական զարգացման հիմնական փուլերն ու օրինաչափությունները իրենց գործունեության սոցիալական կարևորության գնահատման համար: ԸԿ 2. Օգտագործել ստացված տնտեսագիտական գիտելիքները տարբեր ոլորտներում գործունեության արդյունքների արդյունավետությունը գնահատելու համար ԸԿ 3. Հաղորդակցվել գրավոր և բանավոր՝ հայերեն և օտար լեզուներով, լուծելու համար միջանձնային, միջմշակության, մասնագիտական խնդիրները: ԸԿ 4. Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական գործունեության մեջ և անձնական աճի համար՝ կողմորոշվելով դրանց հաճախ փոփոխման պայմաններում: ԸԿ 5. Աշխատել թիմով, արդյունավետ շփվել գործընկերների, ղեկավարության և

սպառողների հետ՝ հանդուրժողություն դրսևորելով սոցիալական, էթնիկ և մշակութային տարբերությունների նկատմամբ: ԸԿ 6. Զբաղվել ինքնակրթությամբ, գիտակցաբար պլանավորել մասնագիտական առաջընթացը: ԸԿ 7. Օգտագործել իրավաբանական գիտելիքները մասնագիտական գործունեության տարբեր բնագավառներում ճիշտ կողմնորոշվելու համար: ԸԿ 8. Օգտագործել ստացած գիտելիքներն առաջին օգնություն ցուցաբերելու և արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու համար:	
4. ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)	
ՄԿԾ ավարտին ակնկալվում է, որ շրջանավարտը. ՄԿ 1. Կունենա գիտելիքներ կենդանիների պահվածքի, խնամքի, հիգիենայի վերաբերյալ: ՄԿ 2. Կիմանա կենդանական և բուսական ծագման հումքի և մթերքի առանձնահատկությունները: ՄԿ 3. Կկանխի կենդանական ծագման մթերքի միջոցով փոխանցվող վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածումը: ՄԿ 4. Կտիրապետի սննդամթերքին վերաբերող նորմատիվ փաստաթղթերին: ՄԿ 5. Ձեռք կբերի կենդանական և բուսական ծագման մթերքի որակի և անվտանգության վրա ազդող գործոնները վերլուծելու ունակություն: ՄԿ 6. Կունենա սննդամթերքի արտադրության մշտապես փոփոխվող միջավայրում (ներառյալ սպանդանոցներ, սննդամթերքի անվտանգության համակարգեր, շրջակա միջավայրի վրա ազդեցություն և սպառողների առողջություն) հիմնական մարտահրավերներին դիմակայելու ունակություն: ՄԿ 7. Կտիրապետի ոլորտային բիզնեսի և նախագծերի կառավարման հիմունքներին, ինչպես նաև ձեռնարկատիրության ներկայիս տեսությանը և պրակտիկային:	
ՄԿԾ վերջնարդյունքներ՝ ըստ կոմպետենցիաների խմբերի	
ՄԿ 1 վերջնարդյունքներ՝ կիրականացնի կենդանիների պահվածքին, խնամքի հիգիենային վերաբերող աշխատանքներ	
1.1	Ստեղծել համապատասխան պայմաններ կենդանիների բնականոն պահվածքի և խնամքի համար
1.2	Բացառել սթրեսային գործոնների ազդեցությունը կենդանիների վրա
1.3	Ապահովել սանիտարական տեսակետից անվտանգ և բարձր սննդային արժեքով սննդամթերքի ու հումքի ստացման համար համապատասխան միջավայր
ՄԿ 2 վերջնարդյունքներ՝ կիրանացնի կենդանական և բուսական ծագման մթերքի փորձաքննություն	
2.1	Ներկայացնել սննդամթերքի դասակարգումն ըստ ծագման, քիմիական կազմի, ապրանքագիտության, վերամշակման առանձնահատկության
2.2	Տարբերակել կենդանական և բուսական ծագման մթերքից առաջացող հիվանդությունները

2.3	Կատարել բուսական և կենդանական ծագման մթերքի սանիտարական փորձաքննություն (համտես,զգայաբանական վերլուծություն, լաբորատոր հետազոտություն)
ՄԿ 3 վերջնարդյունքներ՝ կկանխի կենդանական ծագման մթերքի միջոցով փոխանցվող վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածումը	
3.1	Ճանաչել կենդանիների վարակիչ և մակաբուծային հիվանդությունները
3.2	Կատարել լաբորատոր հետազոտություններ հիվանդության հայտնաբերման համար
3.3	Կատարել կենդանական ծագման մթերքի փորձաքննություն, և տալ սանիտարական գնահատական
3.4	Մշակել մակաբուծային հիվանդությունների տարածումը կանխարգելող եղանակներ
ՄԿ 4 վերջնարդյունքներ՝ կտիրապետի սննդամթերքին վերաբերող նորմատիվ փաստաթղթերին	
4.1	Կազմել անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերը
4.2	Վերլուծել հումքին և մթերքին վերաբերող նորմատիվ փաստաթղթերը
4.3	Կատարել համապատասխան փաստաթղթային գործառույթներ՝ գործող օրենսդրական և կանոնակարգային պայմաններին համապատասխան
ՄԿ 5 վերջնարդյունքներ՝ կունենա կենդանական և բուսական ծագման մթերքի որակի և անվտանգության վրա ազդող գործոնները վերլուծելու ունակություն	
5.1	Ներկայացնել սննդամթերքի որակ և անվտանգություն հասկացությունները
5.2	Բացահայտել սննդամթերքի ռիսկերն ու գնահատել դրանք
5.3	Կանխել անորակ և վտանգավոր սննդամթերքի և հումքի հետագա ոչ նպատակային օգտագործումը, դրանցով հիվանդությունների տարածումը և մարդկանց վարակումը
ՄԿ 6 վերջնարդյունքներ՝ կունենա սննդամթերքի արտադրության մշտապես փոփոխվող միջավայրում (ներառյալ սպանդանոցներ, սննդամթերքի անվտանգության համակարգեր, շրջակա միջավայրի վրա ազդեցություն և սպառողների առողջությունհիմնական մարտահրավերներին դիմակայելու ունակություն	
6.1	Ներկայացնել կենդանական ծագման հումքի վերամշակման ձեռնարկությունները
6.2	Կատարել անվտանգության համակարգերի պահանջներին համապատասխան գործառույթներ
6.3	Ապահովել ազգաբնակչությանը անվտանգ և բարձրորակ սննդամթերքով
ՄԿ 7 վերջնարդյունքներ՝ կտիրապետի բիզնեսի և նախագծերի կառավարման հիմունքներին, ինչպես նաև ձեռնարկատիրության ներկայիս տեսությանը և պրակտիկային	
7.1	Ծավալելով գործունեություն՝ կատարել առաջադրանքներ կենդանապահական գյուղացիական և գյուղացիական ֆերմերային տնտեսություն վարելիս

7.2	Կառավարելով գյուղատնտեսական բիզնես նախագծերը՝ գնահատել ռիսկերը, մատակարարելով ազգաբնակչությանը անվտանգ և որակյալ սննդամթերք
7.3	Իրականացնել նոր բիզնես ծրագրեր արդի շուկայի պահանջներին համապատասխան

6. Ծրագրի կառուցվածքը	
6.1. Ուսումնական պլան (հավելված 1)	
6.2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից (հավելված 2)	
6.3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ (հավելված 3)	
6.4. Ծրագրի առարկաների համառոտ նկարագիրը	
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց լեզու
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է հարստացնել ուսանողի բառապաշարը՝ տարբեր ոլորտներում և մասնագիտական տեքստերում կիրառելու համար, ձևավորել ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելու և տարբեր բնույթի տեքստեր, փաստաթղթեր կազմելու կարողություն:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Գիտակցել լեզվի կարևորությունը մտքերի ձևավորման

	և արտահայտման գործում: 2. Տարբերել բառապաշարի շերտերը՝ կիրառելով համապատասխան ոլորտներում: 3. Կարողանալ կազմել մասնագիտական տեքստեր: 4. Կազմել գործնական գրությունների հիմնական տեսակները (նամակ, դիմում, արձանագրություն, ինքնակենսագրություն և այլն):
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ կտիվ և ինտերակտիվ մեթոդներ. մտազրուհի, «ձնագնդիկ» մեթոդ, բանավեճ-քննարկում, «կլոր սեղան» մեթոդ (որևէ հարցի քննարկում, կարծիքների համեմատություն, մտքերի, գաղափարների ձևավորում, արտահայտում), «Ուղեղի փոթորիկ» (լուծումների, մտքերի հավաք, բոլոր առաջարկների վերլուծություն և ամենահետաքրքիր տարբերակի ընտրություն) Ուսումնառության մեթոդները՝ երկխոսություն, քննարկումներ, ինքնուրույն, թիմային աշխատանքներ, զեկուցումներ, ելույթներ, բանավեճեր
Գնահատման մեթոդները	Գնահատման նախատեսվող ձևն ըստ ուսումնական պլանի՝ քննություն Քննության անցկացման կարգը՝ թեստային առաջադրանք (էլեկտրոնային տարբերակով)
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	Հայոց պատմություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի խորացնել ուսանողների գիտելիքները պատմության վերաբերյալ, զարգացնել պատ-

	մատրամաբանական մտածողությունը և հնարավոր բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը	
Դասընթացի վերջնարդյունքներ	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Կիրառել քննադատական մտածողություն անցյալի և ներկայի պատմական դեպքերը գնահատելիս: 2. Հենվել պատմական փաստերի քննական վերլուծության վրա՝ ներկայիս քաղաքական գործընթացները գնահատելիս: 3. Ներկայացնել իրադարձությունները ժամանակի և տարածության մեջ (աշխարհագրական դիրք, բնական ռեսուրսներ և այլն): 4. Գնահատել աշխարհաքաղաքական իրողության հաշվառմամբ զարգացման ժամանակակից միտումները:	
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ ինտերակտիվ դասախոսություն, նյութի վերլուծություն, քննարկումներ, բանավեճեր, սահիկահանդեսի ցուցադրում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում, բացատրական-ցուցադրական, արտալսարանային դասախոսություններ, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտազրոհ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում	
Գնահատման մեթոդներ	Թեստային, ինքնուրույն աշխատանքներ	
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ		Ուսումնական տարին 202. – 202.
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)		
Դասընթացի անվանումը	Լատիներեն	
Դասընթացի տեսակը	Պարտադիր	
Դասավանդման լեզուն	Հայերեն	
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ	
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ	

Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան	
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել հունա-լատինական ծագում ունեցող անասնաբուժական-բժշկագիտական տերմինաբանությունների ձևավորման, կիրառման մասին տեղեկություններ, տերմինաբանական լատիներենի (մասնագիտական բառապաշար), նրա լեզվական, կառուցվածքային առանձնահատկությունների կիրառման հմտություններ:	
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Ճանաչել լատիներենի ուղղագրական-ուղղախոսական առանձնահատկությունները: 2. Յուրացնել (բանավոր և գրավոր ձևով) ծրագրով նախատեսվող հունալատիներեն շուրջ 350 բառ ու բառակազմական միավոր (բառարմատ, տերմինատարր, ածանց): 3. Համեմատել լատիներենի և հունարենի բառակազմական կանոնները (տերմինաշինություն): 4. Իմանալ դեղատոմսային ընդունված կրճատումներն ու հապավումները, դեղագրական կանոնները: 5. Արեստավարժ ձևով օգտվել մասնագիտական տեղեկատուներից:	
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ բացատրություն, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ, ինդուկտիվ, համադրության մեթոդներ Ուսումնառության մեթոդներ՝ ինքնուրույն, թիմային աշխատանքներ, գրավոր աշխատանք, քննարկումներ, ուսուցողական խաղեր	
Գնահատման մեթոդները	Գնահատման նախատեսվող ձևն ըստ ուսումնական պլանի՝ քննություն	
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ		Ուսումնական տարին 202. – 202.
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)		
Դասընթացի անվանումը	Անատոմիա - 1	
Դասընթացի տեսակը	Պարտադիր	

Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ կենդանիների անատոմիայի տարբեր ուղղությունների, ներառյալ՝ համեմատական, տեղագրական, հասակային, ցեղային, տիպային, սեռային, էվոլյուցիոն և ֆունկցիոնալ առանձնահատկությունների, ինչպես նաև օրգանների անատոմիական կառուցվածքի ու զարգացման ընդհանուր առանձնահատկությունների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Տարբերակել գյուղ. կենդանիների օրգանիզմի տարբեր համակարգերում գործող օրգանների կառուցվածքը: 2. Վերլուծել արտաքին միջավայրի ազդեցությունը կենդանու օրգանների ձևավորման և էվոլյուցիոն զարգացման վրա: 3. Մեկնաբանել կմախքի առանձին ոսկրերի, հոդերի, մակերեսային և խորանիստ մկանների, մաշկային ծածկույթի, մարսողական, շնչառական, միզային, արական և իգական սեռական ապարատների առանձնահատկությունները առողջ և անկաճ գյուղ. կենդանիների մոտ: 4. Բացահայտել կենդանու մթերատու հատկությունները և պիտանիությունը տեխնոլոգիական գործընթացներին՝ կախված արտակազմվածքից և համակազմվածքից: 5. Գնահատել կենդանու օրգան-համակարգերի զարգացածության աստիճանը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, թիմային աշխատանք: Ուսումնառության մեթոդները՝ <i>ցուցադրման</i> մեթոդ, որի ընթացքում ներկայացվում են կենդանիների տարաբնույթ

	չոր պատրաստուկներ, կաղապարվածքներ (մույլաժներ), ոսկրային սեգմենտներ, կմախքներ, մկանային և հոդային պատրաստուկներ, թաց ֆորմալինի մեջ սևեռված օրգան համակարգեր, <i>ինտերակտիվ</i> մեթոդ, որի ընթացքում ուսանողը տեսասահիկի միջոցով պատկերացում է կազմում օրգանի և օրգան համակարգի տարածական կառուցվածքի մասին, <i>ինդուկտիվ</i> մեթոդ, <i>դեդուկտիվ</i> մեթոդ
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանքների քննարկում և գնահատում Միջանկյալ և ամփոփ քննություններ՝ թեստային գնահատում
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Օտար լեզու (ռուսաց լեզու)
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Ռուսերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Առարկայի նպատակն է ապահովել ռուսերենի՝ որպես հաղորդակցման միջոցի օգտագործումն առօրյայում, կենցաղային, մշակութային և կրթական ոլորտներում:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Օգտագործել ռուսերենի առօրյա-խոսակցական, համագործածական, ընդհանուր գիտական բառապաշարը համապատասխան ոլորտներում: 2. Ներկայացնել իր կենսագրությունը, խոսել իր ապագա մասնագիտության, պլանների, երկրի մասին: 3. Կրթական, մշակութային, ընդհանուր մասնագիտական բնույթի տեքստերից օգտվելով, ներկայացնել անհրաժեշտ տեղեկություն: 4. Ձևակերպել սեփական կարծիքը կարդացած նյութի

	վերաբերյալ: 5. Ինքնուրույն կազմել տարբեր ոճերի փոքրածավալ տեքստեր:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ բացատրություն, տեսալսողական (аудиовизуальный), ինդուկտիվ, համադրության մեթոդներ Ուսումնառության մեթոդները՝ գրավոր աշխատանք, խոսքային (вербальный) մեթոդ, քննարկումներ, ուսուցողական խաղեր
Գնահատման մեթոդները	Ընթացիկ աշխատանքի գնահատում դասերի ժամանակ, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ (միջանկյալ) քննություն՝ թեստ, ավարտական քննություն՝ թեստ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Անասնաբուծություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	7 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ անասնաբուծության ոլորտում՝ իրականացնելու կենդանիների բուծումը, պահվածքն ու խնամքը տարածաշրջանային և միջազգային պահանջներին համապատասխան:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Իմանալ գյուղատնտեսական կենդանիների ծագման, ցեղագոյացման, բուծման մեջ կիրառվող տեսությունները:

	2. Իմանալ գյուղատնտեսական կենդանիների ընտրության և զույգընտրության սկզբունքներն ու ձևերը: 3. Հաշվառել տարբեր տեսակի գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ցուցանիշները: 4. Կիրառել կենդանիների մթերատվության բարձրացման միջոցառումներ: 5. Վերլուծել շրջակա միջավայրի վրա անասնաբուծության արտադրության ունեցած ազդեցության ռիսկերը (կենդանիներից արտանետումները): 6. Ցուցաբերել կարողություններ և հմտություններ անասնաբուծությունում առկա խոչընդոտների և խնդիրների դեպքում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, թիմային աշխատանք, բանավոր և գրավոր ներկայացումներ և այլ մեթոդներ՝ կախված քննարկվող թեմայի առանձնահատկություններից Ուսումնառության մեթոդները՝ ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ
Գնահատման մեթոդները	Թեստային, բանավոր կամ գրավոր քննություններ, պրեզենտացիաներ, հոդվածներ, անհատական աշխատանքներ և այլն
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ընդհանուր քիմիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ

Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել քիմիայի բոլոր ճյուղերի տեսական և կիրառական դրույթներին, դեղապատրաստուկներում և սննդամթերքում առկա քիմիական բաղադրիչի փորձաքննության որակական և քանակական մեթոդներին:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Վերլուծել քիմիական երևույթների հիմնապատճառները և դրանց դերն ու կարևորությունը կենսական նշանակության պրոցեսներում ու տարաբնույթ քիմիական նյութերի փորձաքննության համար կիրառվող մեթոդներում: 2. Ներկայացնել կապը կենդանի օրգանիզմներում տարրերի բաշխվածության և դրանց ֆունկցիոնալ ազդեցության միջև: 3. Կիրառել տեսական գիտելիքները գործնական խնդիրների լուծման համար:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ դասախոսություն, սեմինարներ, դիդակտիկ նյութերի քննարկում Ուսումնառության մեթոդները՝ ինքնուրույն աշխատանքներ, ինտերակտիվ քննարկումներ, փորձարարական աշխատանքներ
Գնահատման մեթոդները	Լաբորատոր փորձերի, միջանկյալ և ամփոփ քննությունների գնահատում թեստերի միջոցով
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց լեզու և խոսքի մշակույթ
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն

Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ	
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ	
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան	
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է կարողանալ ձևավորել մշակված և հղկված խոսք՝ տարբեր ոլորտներում հանդես գալու համար, ձեռք բերել տարաբնույթ տեքստեր (ռեֆերատ, զեկուցում, ինքնուրույն աշխատանք, պաշտոնական գրագրություն և այլն) կազմելու և ներկայացնելու հմտություն:	
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Օգտագործել ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսք կազմելիս: 2. Զանազանել գրական ու հրապարակախոսական, վարչական ու տեղեկատվական, գիտական, գրասենյակային և այլ տեքստերը: 3. Մշակել գրավոր պաշտոնական հաղորդակցման մեջ հաճախ գործածվող կազմակերպական, կարգադրական, տեղեկատվական փաստաթղթեր՝ տիպային օրինակին խիստ համապատասխան: 4. Հանդես գալ ռեֆերատ-զեկուցումով:	
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ. մտազրոհ, «ձնագնդիկ» մեթոդ, բանավեճ-քննարկում, «կլոր սեղան» մեթոդ» (որևէ հարցի քննարկում, կարծիքների համեմատություն, մտքերի, գաղափարների ձևավորում, արտահայտում), «ուղեղի փոթորիկ» (լուծումների, մտքերի հավաք, բոլոր առաջարկների վերլուծություն և ամենահետաքրքիր տարբերակի ընտրություն) Ուսումնառության մեթոդները՝ երկխոսություն, քննարկումներ, ինքնուրույն, թիմային աշխատանքներ, զեկուցումներ, ելույթներ, բանավեճեր	
Գնահատման մեթոդները	Թեստային քննություն	
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ		Ուսումնական տարին 202. – 202.
Մասնագիտական կրթական ծրագիրը	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	
Դասընթացի ծածկագիր		

Դասընթացի անվանումը	Հասարակագիտական առարկաների մոդուլ (Հայոց պատմություն, մշակութաբանություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն)
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է նպաստել ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանը, քաղաքացիական դիրքորոշում ունենալու կարողության ձևավորմանը, ուսանողների մոտ հետաքրքրություն արթնացնել հումանիտար գիտությունների և արվեստի նկատմամբ, ձևավորել հասարակությանն առնչվող խնդիրների նկատմամբ այլընտրանքային մոտեցումներ ցուցաբերելու կարողություն, նպաստել համամարդկային արժեքների համատեքստում ազգային պատմության և մշակույթի արժևորմանը, ուսանողների մշակութային ճաշակի զարգացմանը:
Դասընթացի վերջնարդյունքներ	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Հիմնավորել սեփական տեսակետն ու դիրքորոշումը հասարակական երևույթները գնահատելիս: 2. Քննադատորեն վերլուծել հասարակական գործընթացներին վերաբերող տեղեկատվությունը: 3. Բանավիճել՝ պահպանելով փաստարկման կանոնները (այդ թվում՝ էթիկական): 4. Ներկայացնել գաղափարների ազդեցությունը հասարակության զարգացման վրա (փիլիսոփայական միտք, քաղաքական գաղափարներ, մշակութային ձեռքբերումներ): 5. Բնութագրել ազգային յուրահատկությունները մշակութային բազմազանության համատեքստում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, զննական, ճանաչողական-ստեղծագործական, համագործակցային ուսուցման մեթոդներ, թեմատիկ քննարկումներ և բանավեճեր, հարց և պատասխան, կլոր սեղան, թիմային աշխատանք

	Ուսումնառության մեթոդները՝ դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական, էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ
Գնահատման մեթոդներ	Թեստային և ինքնուրույն աշխատանքներ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է բարձրացնել ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը, զարգացնել հաղորդակցական կոմպետենցիան:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Թարգմանել տեքստերը: 2. Վերարտադրել կարդացած տեքստը: 3. Վերլուծել ընթերցած տեքստը օտար լեզվով: 4. Գործածել բավականաչափ քերականական կառույցներ: 5. Գործածել առօրյա կարիքների հետ կապված մտապահված սահմանափակ բառապաշար: 6. Հաղորդակցվել անցած թեմաների շուրջ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ «մտազրոհ», խճանկարի մեթոդ, անհատական աշխատանք, բանավեճ, ֆիլմերի դիտում, լսողական վարժություններ, երկխոսություն, քննարկումներ, թիմային աշխատանքներ, տեսասահիկների ներկայացում

	Ուսումնառության մեթոդները՝ տեքստերի թարգմանություն, զրույց
Գնահատման մեթոդները	Ընթացիկ աշխատանքի գնահատում, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ (միջանկյալ) քննություն՝ թեստ, ավարտական քննություն՝ թեստ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Անատոմիա - 2
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Անատոմիա 1
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ օրգանիզմի և միջավայրի միասնության, դրանց առանձին բաղադրամասերի անբաժանելիության, հոմոլոգիական շարքերի կապվածության, ինչպես նաև խողովակազմ և պարենքիմատոզ օրգանների կառուցվածքի մասին:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Տարբերակել գյուղ. կենդանիների օրգանիզմի տարբեր օրգանների ու օրգան-համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունները: 2. Մեկնաբանել օրգանի ճիշտ տեղադրությունն ու նյարդավորումը: 3. Նկարագրել կենդանիների տարբեր ինտեգրող օրգան-համակարգերի մորֆոֆունկցիոնալ կառուցվածքները: 4. Բացատրել սրտանոթային, արյան և ավշային շրջանառության, նյարդային համակարգի, զգայարների և ներքին սեկրեցիոն գեղձերի տեղադրությունը առողջ և անկաժ կենդանիների մոտ: 5. Վերլուծել թռչունների կմախքի և ներքին օրգանների

	Էվոլյուցիոն փոփոխությունները՝ կապված թռիչքի հետ:	
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, թիմային աշխատանք Ուսումնառության մեթոդները՝ <i>ցուցադրման</i> մեթոդ, որի ընթացքում ներկայացվում են կենդանիների տարաբնույթ չոր պատրաստուկներ, կադապրվածքներ(մուլլաժներ), ոսկրային սեգմենտներ, կմախքներ, մկանային և հոդային պատրաստուկներ, թաց ֆորմալինի մեջ սևեռված օրգան համակարգեր, <i>ինտերակտիվ</i> մեթոդ, որի ընթացքում ուսանողը տեսասահիկի միջոցով պատկերացում է կազմում օրգանի և օրգան համակարգի տարածական կառուցվածքի մասին, <i>ինդուկտիվ</i> մեթոդ, <i>դեդուկտիվ</i> մեթոդ	
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանքների քննարկում և գնահատում, միջանկյալ և ամփոփ քննությունների թեստային գնահատում	
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ		Ուսումնական տարին 202. – 202.
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)		
Դասընթացի անվանումը	Մաթեմատիկա	
Դասընթացի տեսակը	Պարտադիր	
Դասավանդման լեզուն	Հայերեն	
Կրեդիտները (ECTS)	3 կրեդիտ	
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ	
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան	
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել տրամաբանական և վերլուծական մտածողություն, սովորեցնել ուսման և աշխատանքի հետ առնչվող բազմաբնույթ խնդիրների լուծման մեթոդները:	
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Ներկայացնել մաթեմատիկայի պարզագույն խնդիր-	

	ները: 2. Իրականացնել խնդիրների լուծման մեթոդները: 3. Հեշտությամբ կատարել մաթեմատիկական գործողություններ, վարժ տիրապետել ածանցման և ինտեգրման գործողություններին: 4. Հմտորեն կիրառել գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության բաժիններից ստացած գիտելիքները կիրառական խնդիրներում: 5. Վերլուծելով կիրառական խնդիրները՝ գնահատել դրանց լուծման հնարավոր ուղիները: 6. Կառուցել մաթեմատիկական մոդելներ մասնագիտական բնագավառներում առաջացող խնդիրների համար՝ առաջարկելով լուծումներ:	
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում և համապատասխան խնդիրների քննարկում, գործնական խնդիրների լուծում Ուսումնառության մեթոդները՝ համապատասխան հանձնարարությունների կատարում, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, տնային հանձնարարությունների կատարում, համապատասխան խնդիրների ինքնուրույն վերլուծություն	
Գնահատման մեթոդները	Ընթացիկ և վերջնական ստուգումներ՝ հաճախումների և ինքնուրույն աշխատանքների Միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներով, միջանկյալ և ամփոփիչ քննություններ՝ թեստային տարբերակով	
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ		Ուսումնական տարին 202. – 202.
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)		
Դասընթացի անվանումը	Անասնաբուժական գենետիկա և կենսատեխնոլոգիա	
Դասընթացի տեսակը	Պարտադիր	
Դասավանդման լեզուն	Հայերեն	
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ	

Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Անատոմիա, ֆիզիոլոգիա
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ կենդանիների ժառանգական նյութի, բնական ու արհեստական փոփոխականության օրինաչափությունների, օրգանիզմների զարգացման և իմունային պաշտպանության մոլեկուլային հիմունքների և մեխանիզմների, կենսատեխնոլոգիայի խնդիրների և բնագավառների գիտական հիմունքների, գենետիկայի և կենսատեխնոլոգիայի հետազոտական մեթոդների և դրանց կիրառման եղանակների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Սահմանել տոհմային ծառը և ժառանգական հիվանդությունների ժառանգման եղանակները: 2. Կատարել արյան խմբերի և բազմաձև սպիտակուցների որոշում, ծագումնաբանական վերլուծություն և ծագման ճշգրտում: 3. Գնահատելով տնտեսապես կարևոր հատկանիշների ժառանգելիության աստիճանը՝ ընտրել գենետիկական նշադիրները սելեկցիոն աշխատանքներում օգտագործելու համար: 4. Վերլուծելով տեսակների կարիոտիպերի գենետիկան, կառուցել քրոմոսոմային քարտեզներ քրոմոսոմի գենի համար: 5. Կատարել պոպուլյացիաների կազմի, կառուցվածքի և փոփոխականության հետազոտում, գենետիկական բազմազանության աստիճանի գնահատում: 6. Կատարել գիտական և տնտեսական հետազոտություն և դրա արդյունքներով իրականացնել ցեղի նպատակային բարելավմանն ուղղված աշխատանքներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, թիմային աշխատանք, բանավոր և գրավոր ներկայացումներ և այլ մեթոդներ՝ կախված քննարկվող թեմայի առանձնահատկություններից Ուսումնառության մեթոդները՝ լաբորատոր աշխատանքներ, խնդիրների լուծում, գենետիկական խնդիրների մոդելավորում և վերլուծություն, թիմային

	աշխատանք
Գնահատման մեթոդները	Ընթացիկ և վերջնական ստուգումներ՝ հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքների հիման վրա Միջանկյալ և ամփոփիչ քննություններ՝ թեստային տարբերակով
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ֆիզիոլոգիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Անատոմիա, քիմիա
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հիմնարար և մասնագիտական գիտելիքներ կենդանիների և թռչունների օրգանիզմի ֆիզիոլոգիական գործընթացների և ֆունկցիաների, մթերատու կենդանիների օրգանիզմում դրանց որակական առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ֆիզիոլոգիական ցուցանիշների որոշման, գրանցման և վերլուծության կարողություններ:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Որոշել օրգանիզմի հոմեոստազի ցուցանիշները: 2. Բացատրել տարբեր օրգան-համակարգերի գործառույթների կարգավորման կենտրոնական և տեղային մեխանիզմները (նյարդային և հումորալ): 3. Կիրառել ստացված գիտելիքները կենդանիների օրգանիզմի ֆիզիոլոգիական վիճակը գնահատելու և կանխարգելիչ միջոցառումներ անցկացնելու համար: 4. Որոշել կենդանիների արյունաբանական ցուցանիշները (ձևավոր տարրերի քանակ, լեյկոցիտային բանաձև,

	հեմոգլոբինի քանակ և այլն): 5. Գնահատել կենդանիների և թռչունների տարբեր օրգան-համակարգերի գործունեությունը (սրտանոթային, շնչառական, մարսողական և այլն):
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, թիմային աշխատանք, բանավոր և գրավոր ներկայացումներ և այլ մեթոդներ՝ կախված քննարկվող թեմայի առանձնահատկություններից Ուսումնառության մեթոդները՝ ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքներ, ինտերակտիվ քննարկումներ, արտալսարանային աշխատանքներ
Գնահատման մեթոդները	Միջանկյալ և վերջնական բանավոր կամ գրավոր քննություն, թիմային աշխատանք, գործնական ինքնուրույն աշխատանքի գնահատում
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Կենսաքիմիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Ընդհանուր քիմիա
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել կենդանի նյութի բաղադրության հիմնական առանձնահատկությունները և դրա բաղադրամասերի կառուցվածքը, հատկությունները, նյութափոխանակային գործընթացներն ու դրանց կարգավորման մեխանիզմները:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Պարզաբանել կենդանի նյութ կազմող միացությունների բնույթը, կառուցվածքը, որակական և քանակական

	կազմը, անվանակարգումը, դասակարգումը, կենսաբանական ֆունկցիաները: 2. Բացահայտել սննդարար նյութերի մարսողությունը և ներծծումը ստամոքսաաղիքային ուղիում, մարսողությունը և ներծծումը կարգավորող մեխանիզմները: 3. Ցուցադրել նյութափոխանակության ինտեգրալ ուղիները, դրանց հանգուցային կարգավորվող օղակները, քիմիական էներգիայի առաջացման և յուրացման ուղիներն ու մեխանիզմները: 4. Տիրապետել ֆերմենտների կառուցվածքին, ֆունկցիային և կատալիտիկ մեխանիզմներին: 5. Կիրառել կենսաքիմիան բժշկության, դեղագործության, սննդաբանության և կենսատեխնոլոգիայի մեջ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, թիմային աշխատանք, բանավոր և գրավոր ներկայացումները և այլ մեթոդներ՝ կախված քննարկվող թեմայի առանձնահատկություններից Ուսումնառության մեթոդները՝ ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքներ, ինտերակտիվ քննարկումներ, արտալսարանային աշխատանքներ
Գնահատման մեթոդները	Միջանկյալ և վերջնական բանավոր կամ գրավոր քննություն, թիմային աշխատանք, գործնական ինքնուրույն աշխատանքի գնահատում
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Ուսումնական տարին 202. – 202.	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հյուսվածաբանություն, սաղմնաբանություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Անատոմիա

Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել կենդանիների օրգանիզմի, առանձին օրգանների հյուսվածքների կառուցվածքային առանձնահատկություններին, ինչպես նաև սաղմի կառուցվածքին ու զարգացման գործընթացներին
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Նկարագրել կենդանի օրգանիզմների բոլոր օրգանների մանրադիտակային և ենթամանրադիտակային կառուցվածքները: 2. Կիրառել վնասված բջիջների, հյուսվածքների և օրգանների ռեգեներացիայի (վերականգնման) և փոխպատվաստման գործընթացները: 3. Պարզաբանել օրգանիզմի առանձին համակարգերի մորֆո- և միկրոմորֆոլոգիական առանձնահատկություններն ու դրանց գործառության դրսևորումները: 4. Բացատրել սաղմի զարգացման փուլերը, բջիջների բաժանումը, հյուսվածքների ձևավորումը: 5. Բացատրել արգանդում բեղմնավորված ձվաբջջի ներդրումը, ընկերքի ձևավորումը, սաղմնային թերթիկների առաջացումը:
